Արշակունի, Սասանեան, Բիւզանդական կամ Արաբական իշխանական բռնաւորներից[1]։

Կիսկիմի սահմաններն են. արեւմուտքից՝ Սպերի հովիտը, հարաւից՝ Թորդում եւ Օլթի գաւառները, արեւմուտքից՝ Պալխար գաւառը եւ հիւսիսից՝ Համշէնը կամ հին աշխարհի Խաղդիքը։ Կիսկիմի եւ Թորդում-Օլթի գաւառների ջրբաժան գիծը կազմում են Խախամին, Եկեղեաց (Աղաջ-Քիլիսէ), Մեղրբեր, Հարկեւոր եւ Աշմուշէնի լեռները հիւսիսից Պարխար լշ-ն։ Կիցկիմի գաւառում ճորոխն են թափւում հետեւեալ առ-նները. հիւսիսից՝ Պալխար լշ-ից դէպի հարաւ են իջնում, ձախից խառնւում ճորոխին՝ Խոտորջուր (Խոտոջուր) իր եօթը թաղերով, առուներով՝ — Արեգի, Գիսակ, Գոգանց թաղ, Կրման, Սունենց, Ճիճապաղ, Միջին-թաղ, Խանթաձոր, Կուդրաշէն, Մոխրկուտ Վ. եւ Ս., Գեղուտ, Նիխախ[2], Կամրիկ, Ծետկոնց, Կաղմխուտ, Նիխախ-բերդ, Գարմիջ կիրն,

---

[1] Խորենացի, Փարպեցի, Ասողիկ, Դրասխանակերացի եւ ուրիշները։

[2] Նիխախ մի քանի հատ կան Կիսկիմի գաւառում, նոյնն էլ կրկնւում է Սպերի եւ Թորդումի շրջանում։ Բայսնի է նոյնպէս Թորդումի խախ կամ խաղ. խախուդեղերը, հոշակաւոր տաճարը իր մեծութեամբ եւ ճարտարապետութեամբ։ Ընդհանրապէս ժողովրդի արտասանութեան մէջ խաղ է եւ շատ հաւանական է, որ խաղդի աստուածութեան անունի շարունակութիւնն է, որ մնացել է ժողովրդի բերանում, նոյն իսկ խաղուդ էլ են անուանում եւ Southampton տպուած քարտէզի վրայ խախը "խախուդ"ն է նշանակուած։